Հավելված 7
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08

Ք.Ճամբարակ
«16» ապրիլ 2018թ

ՀՀ Գեղարքունիքի մարզի ''Ճամբարակի Առողջության Կենտրոն''ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Արմենակ Մելքումյանի այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Արֆարմացիա ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել

ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 989162 / ինը հարյուր ութսունինը հազար մեկ հարյուր վաթսուն երկու/ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ	<<Արֆարմացիա>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17	Ք. Երևան, Ռաֆֆու 111
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ	<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Ճամբարակ մ/ճ	Հ/Հ 163008100220 ՀՎՀՀ 02505735
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165	Էլ. Փոստ՝
Էլ.փոստ:chambarak@bk.ru	arpharm.erevan@yandex.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան	Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.

Հավ.
« 16» 04 2018թ. կ
ծածկագրով պայմանա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	մատակարարման				
						Միավորի գին	Ընդհանուր գին	ենթակա քանակը	Ժամկետը	հասցեն
1	33651134/3	Ցիպրոֆլոքսացին 0.25	Ցիպրոֆլոքսացին ciprofloxacin դեղահատ 250մգ	հաբ	100	15.5	1550	100	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.* *	Ք՝ Ճամբարակ՝S. Մեծի 17
3	33661119/4	Անալգին 50 % 2.0	Մետամիզոլ metamizole լուծույթ ներարկման 500մգ/մլ, 2մլ ամպուլ	ամպ	4000	31.08	124320	4000	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.**	Ք՝ Ճամբարակ՝S. Մեծի 17
4	33631300/5	Կետոպրոֆեն 2.5 % մազ	Կետոպրոֆեն, ketoprofen դոնդող արտաքին կիրառման 25մգ/գ	հատ	15	383	5745	15	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.**	Ք՝ Ճամբարակ՝S. Մեծի 17

10	33631290/1	Իբուպրոֆեն 0.2 մգ	իբուպրոֆեն (ibuprofen).200մգ դեղահատեր	հաբ	500	5.06	2530	500	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
11	33661135/1	Միդազեմ (Midazem)	Միդազոլամ midazolam լուծույթ ներարկման 5մգ/մլ, 3մլ	ամպ	30	1352	40560	30	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
22	33691136/7	Պլազմոտեկ 500 մլ6 % հիդրոքսիէթիլ օսլա նատրիումի	հիդրոքսիէթիլ օսլա (hydroxyethyl starch), լուծույթ, կաթիլաներարկման, 100մգ/մլ, 500մլ	ֆլ	25	1800	45000	25	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
24	33691189/1	Բետասերկ միջ ան(բետահիստինի դիհիդրոքլորիդ	Բետահիստին betahistine դեղահատ 16մգ	դեղահատ	180	123.5	22230	180	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
25	33691136/2	Նատրիումի քլորիդ 0.9 % 100.0 մլ	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 100մլ	ֆլ	1000	148	148000	1000	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17

									ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	
28	33621450/3	Լիզինոպրիլ 10 մգ	Լիզինոպրիլ lisinopril դեղահատ 10մգ	հաբ	2000	14.3	28600	2000	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ապեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
29	33631300/1	Կետոնալ 30 գ կետոպրոֆեն	Կետոպրոֆեն, ketoprofen դոնդող արտաքին կիրառման 30մգ/գ	հատ	10	383	3830	10	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ապեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
32	33651125/1	ազիտրոմիցին	Ազիթրոմիցին azithromycin դեղապատիճ 500մգ	դեղապատիճ	100	300	30000	100	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ապեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
37	33621590/1	Ֆուրոսեմիդ 2.0 մլ	Ֆուրոսեմիդ furosemide,լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 2մլ	ամպ	250	22.6	5650	250	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ապեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
51	33611350/2	Վիտամին C 5.0 մլ	Ասկորբինաթթու, ascorbic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 5մլ	ամպ	600	49.7	29820	600	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ապեսված կողմերի	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի

		ասկորբինա							իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	17
53	33691129/1	Ռինգեր 500.0	Ռինգեր ներարկման (Ringer`s Injection), լուծույթ, կաթիլաներարկման 500մլ,պլաստիկե փաթեթ	ֆլ	500	148	74000	500	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
62	33621510/1	Կապտոպրիլ 25 մգ	Կապտոպրիլ captopril դեղահատ 25մգ	դեղահատ	3000	3.82	11460	3000	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
66	33691136/3	Նատրիումի քլորիդ 0.9 % 250.0 մլ	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 250մլ	ֆլ	1800	147	264600	1800	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
77	33691129/2	Ռինգեր 250.0	Ռինգեր ներարկման (Ringer`s Injection), լուծույթ, կաթիլաներարկման 250մլ, պլաստիկե փաթեթ	ֆլ	800	147	117600	800	2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17

85	33671125/1	Ամբրոքսոլ 30մգ	Ամբրոքսոլ ambroxol դեղահատ 30մգ	դեղահատ	1000	9.94	9940	1000	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.**	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
92	33691138/2	Գլյուկոզա 5 % 250.0	Գլյուկոզ անջուր glucose anhydrous, լուծույթ կաթիլաներարկման, 50մգ/մլ, 250մլ	ֆլ	100	148	14800	100	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.**	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
96	33691186/2	Պիրացետամ 400 մգ	Պիրացետամ Piracetam,դեղահատեր 400մգ	հաբ	60	10.85	651	60	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. **	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
97	33611440/2	Վիտամին B6 1 մլ/պիրիդոքսին	Թիամին (թիամինի հիդրոքլորիդ) (վիտամին B1), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ) (վիտամին B6) վthiamine (thiamine hydrochloride) (vitaminB1), pyridoxine (pyridoxine hydrochloride) (vitaminB6) լուծույթ ներարկման 50մգ/մլ, 1մլ	ամպ	400	16.8	6720	400	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.**	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17
103	33691136/5	Նատրիումի քլորիդ 0.9 % 5.0 մլ	Նատրիումի քլորիդ, Sodium chloride, լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ, 5.0մլ	ամպ	50	31.12	1556	50	*2-3րդ եռամսյակ, պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու*	Ք' Ճամբարակ'S. Մեծի 17

									օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը.*	

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Ապրանքը մատակարարելիս պետք է ունենա որակի սերտիֆիկատ կիրառելի է:

*ապրանքը կարող է մատակարարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ավելի կարճ ժամկետում, եթե մատակարարը համաձայն է

ԳՆՈՐԴ

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
Ք. Երևան, Ռաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220 ՀՎՀՀ 02505735
Էլ. Փոստ՝
arpharm.erevan@yandex.ru
Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

Ստորագրություն Կ.Տ

Հավելված N 2
« 16» 04 2018 թ. կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/0

ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	33651134/3	Ցիպրոֆլոքսացին 0.25	775	775	775	1163	1163	1163	1550	1550	1550
3	33661119/4	Անալգին 50 % 2.0	62160	62160	62160	93240	93240	93240	124320	124320	124320
4	33631300/5	Կետոպրոֆեն 2.5 % մազ	2873	2873	2873	4309	4309	4309	5745	5745	5745
10	33631290/1	Իբուպրոֆեն 0.2 մգ	1265	1265	1265	1898	1898	1898	2530	2530	2530
11	33661135/1	Միդազեմ (Midazem)	20280	20280	20280	30420	30420	30420	40560	40560	40560
22	33691136/7	Պլազմոտեկ 500 մլ6 % հիդրոքսիէթիլ օսլա նատրիումի	22500	22500	22500	33750	33750	33750	45000	45000	45000

24	33691189/1	Բետասերկ միջ ան(բետահիստինի դիհիդրոբլորիդ	11115	11115	11115	16673	16673	16673	22230	22230	22230
25	33691136/2	Նատրիումի քլորիդ 0.9 % 100.0 մլ	74000	74000	74000	11100	11100	11100	148000	148000	148000
28	33621450/3	Լիզինոպրիլ 10 մգ	14300	14300	14300	21450	21450	21450	28600	28600	28600
29	33631300/1	Կետոնալ 30 գ կետոպրոֆեն	1915	1915	1915	2873	2873	2873	3830	3830	3830
32	33651125/1	ազիտրոմիցին	15000	15000	15000	22500	22500	22500	30000	30000	30000
37	33621590/1	Ֆուրոսեմիդ 2.0 մլ	2825	2825	2825	4238	4238	4238	5650	5650	5650
51	33611350/2	Վիտամին C 5.0 մլ ասկորբինա	14910	14910	14910	22365	22365	22365	29820	29820	29820
53	33691129/1	Ռինգեր 500.0	37000	37000	37000	55500	55500	55500	74000	74000	74000
62	33621510/1	Կապտոպրիլ25 մգ	5730	5730	5730	8595	8595	8595	11460	11460	11460
66	33691136/3	Նատրիումի քլորիդ 0.9 % 250.0 մլ	132300	132300	132300	198450	198450	198450	264600	264600	264600
77	33691129/2	Ռինգեր 250.0	58800	58800	58800	88200	88200	88200	117600	117600	117600
85	33671125/1	Ամբրոքսոլ 30մգ	4970	4970	4970	7455	7455	7455	9940	9940	9940
92	33691138/2	Գլյուկոզա 5 % 250.0	7400	7400	7400	11100	11100	11100	14800	14800	14800

96	33691186/2	Պիրացետամ 400 մգ	326	326	326	488	488	488	651	651	651
97	33611440/2	Վիտամին B6 1 մլ/պիրիդոքսին	3360	3360	3360	5040	5040	5040	6720	6720	6720
103	33691136/5	Նատրիումի քլորիդ 0.9 % 5.0 մլ	778	778	778	1167	1167	1167	1556	1556	1556

Պատվիրատու

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165
Էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն

Վաճառող

<<Արֆարմացիա>> ՓԲԸ
ք. Երևան, Ռաֆֆու 111
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163008100220 ՀՎՀՀ 02505735
Էլ փոստ՝ arpharm.erevan@yandex.ru
Տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան

ստորագրություն

Պայմանագրի կողմ
ԱրՓարմացիան ՓԲԸ
գտնվելու վայրը՝ Երևան, Բաֆֆու 111
հհ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
ՀՎՀՀ՝ 02505735

Պատվիրատու
Ճամբարակի առողջության կենտրոն ՓԲԸ
գտնվելու վայրը՝ ք.Ճամբարակ Տիգրան-Ս
հհ ՎՏԲ-Հայաստան բանկ Ճամբարակի մ
ՀՎՀՀ՝ 08617165

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10150
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

"28" ապրիլի 2018թ.
Պայմանագրի/այսուհետ՝ Պայմանագիր/անվանումը՝
Դեղորայքի գնման

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ "16" ապրիլի 2018թ.
Պայմանագրի համարը՝ ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով, պայմանագի կատարման վերաբերյալ՝
թ դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների

Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ (ըստ ժամանակացույցի)
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		
Ազիտրոմիցին-Աստրաֆարմ դպճ 500մգ N3		16	16	ապրիլ	ապրիլ	14,400.00	Ըստ պայմանագրի
Ամբրոքսոլ հաբ 30մգ N20 Բոր.		25	25	ապրիլ	ապրիլ	4,969.80	Ըստ պայմանագրի
Անալգին 50% 2.0 N10 Երֆ.		200	200	ապրիլ	ապրիլ	62,160.00	Ըստ պայմանագրի
Ասկորբինաթթու 5% 5.0 N10 Երֆ.		30	30	ապրիլ	ապրիլ	14,909.76	Ըստ պայմանագրի
Բետասերկ հաբ 16մգ N30		3	3	ապրիլ	ապրիլ	11,115.00	Ըստ պայմանագրի
Գլյուկոզա 5% 250.0 Ֆարմատեք		45	45	ապրիլ	ապրիլ	6,659.82	Ըստ պայմանագրի
Իբուպրոֆեն 0.2 N50 Բոր.		5	5	ապրիլ	ապրիլ	1,264.98	Ըստ պայմանագրի
Լիզինոպրիլ դիտ 10մգ N30 Բորիսով		33	33	ապրիլ	ապրիլ	14,157.00	Ըստ պայմանագրի
Կապտոպրիլ 25մգ N40 Բոր.		37	37	ապրիլ	ապրիլ	5,653.45	Ըստ պայմանագրի
Կետոպրոֆեն գել 2.5% 30մլ		13	13	ապրիլ	ապրիլ	4,978.90	Ըստ պայմանագրի
Նատրիումի ք-դ 0.9% 100.0		320	320	ապրիլ	ապրիլ	47,358.72	Ըստ պայմանագրի
Նատրիումի ք-դ 0.9% 250.0		450	450	ապրիլ	ապրիլ	66,150.00	Ըստ պայմանագրի
Նատրիումի ք-դ 5.0 N10 Երֆ.		2	2	ապրիլ	ապրիլ	622.39	Ըստ պայմանագրի
Պիրացետամ 0.4 դպճ N10		3	3	ապրիլ	ապրիլ	325.48	Ըստ պայմանագրի
Պիրիդոքսին 5% 1.0 N10 Երֆ.		20	20	ապրիլ	ապրիլ	3,360.00	Ըստ պայմանագրի
Պլազմո-տեք 6% 500մլ		13	13	ապրիլ	ապրիլ	23,400.00	Ըստ պայմանագրի
Ռինգեր 250մլ		225	225	ապրիլ	ապրիլ	33,075.00	Ըստ պայմանագրի
Ռինգեր 500մլ		240	240	ապրիլ	ապրիլ	35,519.04	Ըստ պայմանագրի
Ֆուրոսեմիդ 1% 2.0 N10 Բոր.		13	13	ապրիլ	ապրիլ	2,937.95	Ըստ պայմանագրի
Ընդամենը						353,017.29	

Վերոհիշյալ մատակարարումների, աշխատանքների կամ ծառայությունների կատարման կամ մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
(ստորագրություն)
Հովհաննիսյան Անդ
Ազգանուն, Անուն
ԱրՓարմացիա ՓԲԸ
Arpharmacia CJSC
02505735

Աշխատանքը ընդունեց
(ստորագրություն)
Մկրտչյան Լ.
Ազգանուն, Անուն
L.S.

Հավելված 4.1
"16" ապրիլի 2018թ. կնքված
N ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N 10150

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Ճամբարակի առողջության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև "16" ապրիլի 2018թ. -ին կնքված N ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը "28" ապրիլի 2018թ.-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**
Ազիտրոմիցին-Աստրաֆարմ դպճ 500մգ N3	16	տուփ
Ամբրոքսոլ հաբ 30մգ N20 Բոր.	25	տուփ
Անալգին 50% 2.0 N10 Երֆ.	200	տուփ
Ասկորբինաթթու 5% 5.0 N10 Երֆ.	30	տուփ
Բետասերկ հաբ 16մգ N30	3	տուփ
Գլյուկոզա 5% 250.0 Ֆարմատեք	45	հատ
Իբուպրոֆեն 0.2 N50 Բոր.	5	տուփ
Լիզինոպրիլ դիտ 10մգ N30 Բորիսով	33	տուփ
Կապտոպրիլ 25մգ N40 Բոր.	37	տուփ
Կետոպրոֆեն գել 2.5% 30մլ	13	տուփ
Նատրիումի ք-դ 0.9% 100.0	320	տուփ
Նատրիումի ք-դ 0.9% 250.0	450	տուփ
Նատրիումի ք-դ 5.0 N10 Երֆ.	2	տուփ
Պիրացետամ 0.4 դպճ N10	3	տուփ
Պիրիդոքսին 5% 1.0 N10 Երֆ.	20	տուփ
Պլազմո-տեք 6% 500մլ	13	ֆլակոն
Ռինգեր 250մլ	225	հատ
Ռինգեր 500մլ	240	հատ
Ֆուրոսեմիդ 1% 2.0 N10 Բոր.	13	տուփ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ: